Հուսիկ Արա

Ռոմեո՝ առանց Ջուլիետ

Քանդուքարափ է իմ կյանքում հիմա,
իսկ ինչո՞ւ է քո ձեռքն այդքան հանգիստ:

Բառ եմ՝ չեմ գրվում,
ձայն եմ՝ չեմ հնչում,
գույն եմ՝ չեմ նկարվում:

Իր նվերն է համարում քեզ մի երջանիկ հիմա,
և այդ մեկը ես չեմ:
Մի զույգ բախտավոր լույսեր գրկում են քեզ՝
իմ թևերը չեն,
երկու ինքնագոհ կրակներ համբուրում են քեզ՝
իմ շուրթերը չեն,
կանչում անունդ ու ամենաթանկն են խոստովանում քեզ՝
իմ բառերը չեն:
Նայում տիրոջ պես ու լցվում են քո երանությամբ,
այդ աչքերը իմը չեն:

Երբ ինձնից տանում ես ինձ,
ես գումարվում եմ,
իսկ երբ ինձնից հանում ես քեզ,
ես չեմ լինում:

Ու թագուհի է հոչակել քեզ
ինքնամոռաց մի խենթ,
իմ սիրտն է,
որ տեր է դառնում,
երբ ասում է՝ տիրուհիս,
ամեն անգամ,
և ժամերի մեջ քեզ զգում է ավելի,
քան 60 րոպեներն են:

Ես չեղա քո Ռոմեոն,
բայց իմ Ջուլիետը դու ես: